ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

-- ----------ի 2026 թվականի №- -Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի №522-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ««Էներգետիկայի մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 2026 թվականի մայիսի 11-ի ՀՕ-228-Ն օրենքի 22-րդ հոդվածը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը ***որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2019 թվականի դեկտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության էլեկտրաէներգետիկական շուկայի հաղորդման ցանցային կանոնները հաստատելու և Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2017 թվականի մայիսի 17-ի №161-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» №522-Ն որոշման 1-ին կետով հաստատված հավելվածում (այսուհետ՝ ԷՀՑ կանոններ) կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) ԷՀՑ կանոնների 2-րդ ՝

ա. կետի 25-րդ ենթակետում «Համակարգային նշանակության կայանի,» բառերից հետո լրացնել « Համակարգային նշանակության պահեստավորող կայանի,» բառերը.

բ. կետի 46-րդ ենթակետում «արտադրության լիցենզիա» բառերից հետո լրացնել « կամ էներգիայի պահեստավորման լիցենզիա» բառերը, իսկ «ունեցող անձին» բառերից հետո՝ «, ինչպես նաև կայանի վերակառուցման մտադրություն ունեցող անձին՝ այն դեպքերում, երբ կատարվելու են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն պահանջող աշխատանքներ, և որոնք հանգեցնելու են կայանի՝ լիցենզիայով ամրագրված հզորության փոփոխության,» բառերը.

գ. կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ 32.1-ին, 51.1-ին, 52.2-րդ և 53.2-րդ ենթակետերով.

«32.1) **Համակարգային նշանակության պահեստավորող կայան՝** Հաղորդման կամ Բաշխման ցանցին միացված 10 ՄՎտ և ավելի դրվածքային հզորությամբ էներգիա պահեստավորող կայան.».

«51.1) **Պահեստավորող՝** էներգիայի պահեստավորման իրավունք ունեցող և փաստացի պահեստավորող անձ, բացառությամբ կարգաբերման-գործարկման աշխատանքների ընթացքում գտնվող կայանի, իսկ պահեստավորողի միացման դեպքում՝ նաև այդ միացման համար դիմած անձ.».

«52.2) **ԵՊ կայան՝** Օրենքով սահմանված էներգիայի պահեստավորման երաշխիք ունեցող կայան.».

«53.2) **Սահմանափակման ենթակա պահեստավորող՝** էներգիայի պահեստավորման լիցենզիա ունեցող անձ՝ բացառությամբ ԵՊ կայանի.».

2) ԷՀՑ կանոնների 3-րդ կետի 2-րդ ենթակետում «Շուկայի օպերատորի,» բառերից հետո լրացնել « Պահեստավորողի, այդ թվում՝ Համակարգային նշանակության պահեստավորող կայանի,» բառերը.

3) ԷՀՑ կանոնների 24-րդ կետի 4-րդ ենթակետում «:» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով և կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ 5-րդ ենթակետով.

«5) Համակարգային նշանակության պահեստավորող կայաններ:».

4) ԷՀՑ կանոնների 48-րդ կետի՝

ա. 1-ին ենթակետում «արտադրության» բառից հետո լրացնել «, ներառյալ էներգիայի պահեստավորման» բառերը.

բ. 3-րդ ենթակետում «արտադրող» բառից հետո լրացնել « կամ պահեստավորող» բառերը.

գ. 4-րդ ենթակետում «արտադրական» բառից հետո լրացնել « կամ պահեստավորման» բառերը.

5) ԷՀՑ կանոնների 49-րդ կետում «Համակարգային նշանակության կայանները,» բառերից հետո լրացնել « Համակարգային նշանակության պահեստավորող կայանները,» բառերը.

6) ԷՀՑ կանոնների 55-րդ կետի 3-րդ ենթակետում «արտադրության» բառից հետո լրացնել «կամ պահեստավորման» բառերը, ինչպես նաև նույն ենթակետում և ԷՀՑ կանոններում «ԷԱՐԿ» բառը փոխարինել «ԷԱՊԿ» բառով.

7) ԷՀՑ կանոնների 58-րդ կետում «Համակարգային նշանակության կայաններից,» բառերից հետո լրացնել « Համակարգային նշանակության պահեստավորող կայաններից,» բառերը.

8) ԷՀՑ կանոնների 68-րդ կետում «Համակարգային նշանակության սպառողների» բառերից հետո լրացնել «, Համակարգային նշանակության պահեստավորող կայանների» բառերը.

9) ԷՀՑ կանոնների 75-րդ կետում «Համակարգային նշանակության կայանների» բառերից հետո լրացնել « և Համակարգային նշանակության պահեստավորող կայանների» բառերը.

10) ԷՀՑ կանոնների 94-րդ կետի 4-րդ ենթակետում «պահանջարկի և արտադրության» բառերը փոխարինել «պահանջարկի, արտադրության և պահեստավորման» բառերով.

11) ԷՀՑ կանոնների 96.1-ին կետում «Երրորդային պահուստներ» բառերից հետո լրացնել «, ինչպես նաև էներգիայի պահեստավորման ծառայություն» բառերը, իսկ «(Արտադրողների) հզորություն» բառերից հետո՝ « և ԵՊ կայանի կողմից մատուցվող էներգիայի պահեստավորման ծավալ» բառերը.

12) ԷՀՑ կանոնների 99-րդ կետի 7-րդ ենթակետի «:» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով և կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ 5.1-ին, 6.1-ին և 8-րդ ենթակետերով.

«5.1) Համակարգային նշանակության պահեստավորող կայաններ.».

«6.1) Սահմանափակման ենթակա պահեստավորողներ.».

«8) 1 ՄՎտ-ից ավելի դրվածքային հզորությամբ ԵՊ կայաններ:».

13) ԷՀՑ կանոնների 151.1-ին կետի 1-ին ենթակետի «ա» պարբերությունում «Երրորդային պահուստների» բառերից հետո լրացնել « և էներգիայի պահեստավորման ծառայությունների մատուցման» բառերը.

14) ԷՀՑ կանոնների 151.3-րդ կետում «Համակարգային նշանակության կայանները» բառերից հետո լրացնել « և Համակարգային նշանակության պահեստավորող կայանները» բառերը.

15) ԷՀՑ կանոնների 166-րդ, 167-րդ և 168-րդ կետերում «ՀԾՄ-ի և Համակարգային նշանակության կայանների» բառերը փոխարինել «ՀԾՄ-ի, Համակարգային նշանակության կայանների և Համակարգային նշանակության պահեստավորող կայանների» բառերով.

16) ԷՀՑ կանոնների 170-րդ կետի 4-րդ ենթակետի «:» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով և կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ 5-րդ ենթակետով.

«5) պահեստավորման ծառայություն մատուցելու կարգադրություն:».

17) ԷՀՑ կանոնների 173-րդ կետի 2-րդ ենթակետում «Համակարգային նշանակության կայանների» բառերից հետո լրացնել « և Համակարգային նշանակության պահեստավորող կայանների» բառերը.

18) ԷՀՑ կանոնների 178-րդ կետում «Համակարգային նշանակության կայանների» բառերից հետո լրացնել « և Համակարգային նշանակության պահեստավորող կայանների համապատասխանաբար» բառերը, իսկ «գեներատորները» բառից հետո՝ « և պահեստավորող ագրեգատները» բառերը.

19) ԷՀՑ կանոնների 179-րդ և 180-րդ կետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«179. Համակարգային նշանակության կայանները և Համակարգային նշանակության պահեստավորող կայանները յուրաքանչյուր տարի մինչև հոկտեմբերի 1-ը Համակարգի օպերատորին են ներկայացնում իրենց Գործարկման տեղակայանքների ցանկը՝ համապատասխանաբար ըստ գեներատորների և պահեստավորող ագրեգատների:

180. Համակարգի օպերատորն ուսումնասիրում է Համակարգային նշանակության կայանների և Համակարգային նշանակության պահեստավորող կայանների Գործարկման տեղակայանքների ցանկը, մինչև նոյեմբերի 1-ը հաստատում ու այդ մասին տեղեկացնում Հանձնաժողովին և Գործարկման տեղակայանքներ տնօրինող Համակարգային նշանակության կայաններին և Համակարգային նշանակության պահեստավորող կայաններին: Համակարգի օպերատորը Համակարգային նշանակության կայանների և Համակարգային նշանակության պահեստավորող կայանների Գործարկման տեղակայանքների ցանկի ուսումնասիրության ընթացքում իրավունք ունի պահանջել լրացուցիչ տեղեկատվություն կամ թողարկել այդ տեղակայանքները՝ էլեկտրաէներգետիկական համակարգի լրիվ մարումից հետո առանց արտաքին լարման աղբյուրի դրանց թողարկվելու և սինքրոնացվելու ունակությունը պարզելու նպատակով:».

20) ԷՀՑ կանոնների 28.1-ին գլխի վերնագրում «ԱՐՏԱԴՐՈՂՆԵՐԻ» բառից հետո լրացնել « ԵՎ ՊԱՀԵՍՏԱՎՈՐՈՂՆԵՐԻ» բառերը.

21) ԷՀՑ կանոնների 183.1-ին կետում «Սահմանափակման ենթակա արտադրողին» բառերից հետո լրացնել «կամ Սահմանափակման ենթակա պահեստավորողին» բառերը և 2-րդ ենթակետում «Սահմանափակման ենթակա արտադրող» բառերից հետո լրացնել «կամ Սահմանափակման ենթակա պահեստավորող» բառերը.

22) ԷՀՑ կանոնների 183.2-րդ կետի 4-րդ ենթակետի «:» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով և կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ 2.1-ին և 5-րդ ենթակետերով.

«2.1) էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայում Գործարք չկնքած Սահմանափակման ենթակա պահեստավորող.».

«5) Սահմանափակման ենթակա պահեստավորողներ՝ ըստ էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայում կնքված Գործարքների շրջանակում ընդամենը վաճառքի ենթակա էլեկտրական էներգիայի քանակի աճման:».

23) ԷՀՑ կանոնների 183.3-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«183.3. Եթե Գործարք կնքած Սահմանափակման ենթակա արտադրողների կամ Սահմանափակման ենթակա պահեստավորողների՝ Գործարքների շրջանակում կայանների՝ վաճառքի ենթակա էլեկտրական էներգիայի քանակները համապատասխանաբար հավասար են, ապա ԷՀՑ կանոնների 183.1-ին կետով նախատեսված կարգավարական կարգադրությունը Համակարգի օպերատորն առաջին հերթին տալիս է այն Սահմանափակման ենթակա արտադրողին կամ Սահմանափակման ենթակա պահեստավորողին, որի՝ տվյալ տարվա էլեկտրական էներգիայի՝ ԷՀՑ կանոնների 183.1-ին կետի հիմքով դադարեցումների կամ սահմանափակումների ընդամենը տևողությունն ամենափոքրն է, իսկ նշված պայմանի հավասարության դեպքում՝ ըստ Սահմանափակման ենթակա արտադրողի կամ Սահմանափակման ենթակա պահեստավորողի հարկ վճարողի հաշվառման համարի աճման:».

24) ԷՀՑ կանոնների 183.4-րդ կետում «Սահմանափակման ենթակա արտադրողների» բառերից հետո լրացնել « կամ Սահմանափակման ենթակա պահեստավորողների» բառերը.

25) ԷՀՑ կանոնների 183.5-րդ կետում «Սահմանափակման ենթակա արտադրողների» բառերից հետո լրացնել « և Սահմանափակման ենթակա պահեստավորողների» բառերը.

26) ԷՀՑ կանոնների 183.7-րդ կետում «Սահմանափակման ենթակա արտադրողներին» բառերից հետո լրացնել « և Սահմանափակման ենթակա պահեստավորողներին» բառերը.

27) ԷՀՑ կանոնների 183.8-րդ կետում «Սահմանափակման ենթակա արտադրողը» բառերից հետո լրացնել « և Սահմանափակման ենթակա պահեստավորողը» բառերը, իսկ «Սահմանափակման ենթակա արտադրողի» բառերից հետո՝ « և Սահմանափակման ենթակա պահեստավորողի» բառերը.

28) ԷՀՑ կանոնների 183.9-րդ կետում «Սահմանափակման ենթակա արտադրողը» և 183.10-րդ կետում «Սահմանափակման ենթակա արտադրողն» բառերից հետո լրացնել համապատասխանաբար «և Սահմանափակման ենթակա պահեստավորողը» և «և Սահմանափակման ենթակա պահեստավորողն» բառերը.

29)ԷՀՑ կանոնների 196-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ 1.1-ին ենթակետով.

«1.1) Պահեստավորողը.».

30) ԷՀՑ կանոնների 199-րդ կետում «Սահմանափակման ենթակա արտադրողի» բառերից հետո լրացնել « կամ Սահմանափակման ենթակա պահեստավորողի» բառերը.

31) ԷՀՑ կանոնների 204-րդ կետի 4.1-ին ենթակետում «Սահմանափակման ենթակա արտադրողի» բառերից հետո լրացնել « կամ Սահմանափակման ենթակա պահեստավորողի» բառերը.

32) ԷՀՑ կանոնների 214.1-ին կետում «Սահմանափակման ենթակա արտադրողի» բառերից հետո լրացնել « և Սահմանափակման ենթակա պահեստավորողի» բառերը. ԷՀՑ կանոնների 238-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ 1.2-րդ ենթակետով.

«1.2) Համակարգային նշանակության պահեստավորող կայանների դեպքում՝ առանձնացված ըստ կայանը լիցքավորելու համար սպառված և առաքված էլեկտրական էներգիայի քանակների որոշման.».

33) ԷՀՑ կանոնների 240-րդ կետի՝

ա. 4-րդ ենթակետում «ենթակայաններում և արտադրող» բառերը փոխարինել «ենթակայաններում, արտադրող և պահեստավորող» բառերով.

բ. 5-րդ ենթակետում «(այդ թվում՝ հիդրոէլեկտրակայանների կասկադների)» բառերից հետո լրացնել « և պահեստավորող կայանների» բառերը.

34) ԷՀՑ կանոնների 241-րդ կետի 3-րդ ենթակետում «Արտադրողին,» բառից հետո լրացնել « Պահեստավորողին,» բառը

35) ԷՀՑ կանոնների N 3 հավելվածի՝

ա. 1-ին կետի 2-րդ ենթակետը «Արտադրող» տողից հետո լրացնել «Պահեստավորող» տողով.

բ. 1-ին կետի 6-րդ ենթակետում «Արտադրողի» բառից հետո լրացնել « կամ Պահեստավորողի» բառերը.

գ. 1-ին կետի 13-րդ ենթակետն ուժը կորցրած ճանաչել.

դ. հավելվածը լրացնել 2.1-ին կետով՝ համաձայն սույն որոշման N 1 հավելվածի.

ե. 3-րդ կետի 2-րդ ենթակետը լրացնել հետևյալ բովանդակությամբ «ե1» և «զ1» պարբերություններով՝ դրանցում պահպանելով ըստ փուլերի I, II, III և IV տվյալների լրացման դաշտերը.

«ե1. սեփական պահեստավորման էլեկտրական էներգիայի դրվածքային (լիցքաթափման) հզորությունը (ՄՎտ)».

«զ1. սեփական պահեստավորման էլեկտրական էներգիայի տարեկան ծավալը (ՄՎտժ)».

36) ԷՀՑ կանոնների N 4 հավելվածի՝

ա. 1-ին կետի 2-րդ ենթակետը լրացնել «Արտադրող» տողից հետո լրացնել «Պահեստավորող» տողով.

բ. 1-ին կետի 6-րդ ենթակետում «Արտադրողի» բառը փոխարինել «Տեղակայանքի» բառով.

գ. 1-ին կետի 14-րդ ենթակետն ուժը կորցրած ճանաչել.

դ. հավելվածը լրացնել 2.1-ին կետով՝ համաձայն սույն որոշման N 2 հավելվածի.

ե. 3-րդ կետի 2-րդ ենթակետը լրացնել հետևյալ բովանդակությամբ «ժա1» և «ժբ1» պարբերություններով՝ դրանցում պահպանելով «Գոյություն ունեցող» և «Նոր» տվյալների լրացման դաշտերը.

«ժա1. սեփական պահեստավորման ենթադրվող տարեկան ծավալները (ՄՎտժ)».

«ժբ1. սեփական պահեստավորման առավելագույն հզորությունը (ՄՎտ)»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2026 թվականի դեկտեմբերի 4-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Մ. ՄԵՍՐՈՊՅԱՆ**

ք. Երևան

-- ----------ի 2026թ.